«ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ... ՄՈՒԹԱԼԻԲՈՎԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑՈՒՄ

Վերադառնալով Մոսկուայից, Խորհրդային Միութեան պրեզիդենտ, «պերեստրոյկայի» նախաձեռնող, ըստ երեւոյթին, նաեւ նրա զերեզմանափոր Միխայիլ Գորբաչովի հետ հանդիպումից, Բաֆուի ռադիոն հաղորդեց Ա. Մութալիբովի հարցազրոյցը։

Անհարկի համարելով մէկ առ մէկ շարադրել ու մէկնաբանել Ադրբեջանի նախագահի բոլոր հնաբոյր դրոյթները, կարծում ենք, բաւական է պարզապէս հաղուադաբար ներկայացնել դրանցից առաւել բնորոշները։ Ահա դրանք. «Ադրբեջանի հայազգի հաղաֆացիները այսուհետեւ էլ կարող են ապրել հանրապետութիւնում, եթէ նրանք ընդունեն հանրապետութեան օրէնքները, Խորհրդային Միութեան սահմանադրութիւնն ու օրէնքները», «Այն անձինք, ովքեր կը խախտեն անձնագրային ռեժիմը, ապօրինի զէնք կը պահեն, նրանց հանդէպ, ըստ սահմանուած օրէնքների, այսուհետեւ եւս կը կիրառուեն համապատասխան միջոցներ», «Զայֆենդի բնակիչները եթէ ցանկանում են ապրել այստեղ՝ կատարելով նշածս պայմանները, կ'օգտուեն հաղաֆացիական բոլոր իրաւունքներից, կ'ապահովուի նրանց անվտանգութիւնը։ Իսկ այն անձինք, ովքեր ցանկութիւն կը յայտնեն փոխել իրենց բնակութեան վայրը, մենք անհրաժեշտ օգնութիւն ցոյց կը տանք նրանց», «Մեր նպատակն է՝ Զայֆենդը մաքրել աւազակախմբերից ու զէնքից»։

Ինչպէս տեսնում ենք, խնդրոյ առարկայի շուրջ ադրբեջանական ղեկավարի հետեւութիւնները, ի տարբերութիւն մոսկովեան բանակցութիւնների թողած թարմ տպաւորութիւնների, այնքան էլ թարմ չեն։ Ինչպէս ասում են՝ էլի նոյն աղացն է ու աղունը։ Այսինքն՝ Մութալիբովն ակնյայտօրէն նոյն դիրքորոշումն ունի, ինչպիսին ունէր Մոսկուա մեկնելուց առաջ, մէկ կամ երկու տարի առաջ եւ կամ ինչպիսի դիրքորոշմամբ միջին դարերում Անդրկովկաս էին թափանցել նրա բուրանական հոչուոր նախնիները։ Առկայ է միայն մի տարբերութիւն՝ խաշնարածների արժանի ժառանգներն այս անգամ հողի բնիկ տէրերին՝ գետաշէնցի ու մարտունաշէնցի երեխաներին, կանանց, ծերունիներին, Մութալիբովի իսկ բնորոշմամբ՝ աւազակախմբերին, բռնի տեղահանում են արդիական զէնքով սպառազէն սեփական ՕՄՕՆականների եւ Խորհրդային կանոնաւոր զօրքերի սանրող կրակահերթերի տակ, ժամանակակից ուղղաթիռներով։ Մի խօսքով, ինչպէս Ադրբեջանի պրեզիդենտն է բարբառում իր հարցազրոյցում եւ ինչպէս Միութեան պրեզիդենտն է իր տէրունական խոստումով երաշխաւորել, դա պէտք է հասկանանք այսպէս՝ Գետաշէնի եւ Մարտունաշէնի անպաշտպան հայ բնակչութեանը մեծահոգաբար թոյլատրուում է Ադրբեջանում օգտուել հաղաֆացիական բոլոր իրաւունքներից, ապահովվում է նրա անվտանգութիւնը։ Եւ քանի որ սկսած սումգայիթից առ այսօր այդպիսին է ներկայանում փլուզուող կայսրութեան շատ այլ ժողովուրդների ներկայանում գորբաչովեան «պերեստրոյկայի» երկսայր հաղաֆականութիւնը, քանի որ հենց այդ հաղաֆականութեան արգասիք է Ադրբեջանի պրեզիդենտի վերոյիշեալ հարցազրոյցը, ապա մի՞թէ ճիշտ ժամանակը չէ մտածել, որ դա նոյն այդ «վերակառուցման» վերջին խօսքն է, վերջին բնորոշ արտայայտութիւնը, զուցէ եւ կարապի երգը։